

ԹԻՖԼԻՍՅԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Դարեր շարունակ ապրելով կողք-կողքի, հայ և վրաց քրիստոնյա երկու ժողովուրդները թե՛ ուրախության, թե՛ արհամարհանքի տարիներին եղել են միասին: Մասնավորապես թիֆլիսաբնակ հայերը վրացիների հետ հավասարապես զբաղվել են խաղաղ շինարարական աշխատանքներով, դիմագրավել օտար նվաճողներին, կովել, զոհվել, գերեվարվել: Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վաչե Նալբանդյանի «Թիֆլիսին հայ մատենագրության մեջ» գիրքը բացում է մեր ժողովուրդների պատմության՝ հիմնականում ցավալի դրվագները—պատերազմներ, ավարառություն, գերեվարություն, կոտորածներ¹: Հայ մատենագիրներն արձանագրել են «հրաշաշեն և հրաշալի, հույակալոր և ականալոր մեծ մայրաքաղաք Տփլիսի» ժողովրդի կյանքը, պայքարը, տառապանքներն ու հաղթանակները: Ու թեև այսօր մեր այս անհանգիստ կյանքի, ծանր ապրումների, կրած ամենօրյա վիրավորանքների և անհույս սպասումների մթնոլորտում թվում է անպատեհ բան է անցյալի հուշերին տրվելը, բայց մենք, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում վերհիշել հայ և վրացի ժողովուրդների անցյալ դարի առաջին կեսի պատմության հետաքրքրական դրվագները: Դրանք մեր ժողովուրդների բարոյական նկարագրի, մարդկային առաքինությունների և անաղարտ բարեկամության վկայություններն են, որոնք պարտավոր ենք հիշել և խնամքով պահպանել:

Եթե հայ մատենագիրները ժամանակի քաղաքական տառնապալի անցքերով մտահոգված գրեթե չեն անդրադարձել թիֆլիսի բնակչության առօրյա կյանքի հանգամանքներին, ապա, բարեբախտաբար, անցյալ դարի կեսերին թիֆլիսում հրատարակված «Կովկաս» (1846—1847) և «Արարատ» (1850—1851) շաբաթաթերթերի էջերում իրենց արտացոլումն են գտել ժողովրդի կյանքի, բարքերի, հավատալիքների և հարեան ազգությունների հետ ունեցած փոխհարաբերությունների պատկերները:

«Կովկաս» և «Արարատ» շաբաթաթերթերի նյութերը օգնում են սերունդներին՝ տեսնելու թիֆլիսը այնպես, ինչպիսին այն կար, քաղաքային կյանքի իր ինքնատիպ ու անկրկնելի հմայքով, տարբեր ազգությունների խնամակալի իր աղնիվ պահածքով:

1795 թ. Աղա Մամեդ խանի արշավանքից մի քանի տարի անց, 1801-ին Վրաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո անգամ, թիֆլիսը դեռևս մնում էր ավերված այնպես, որ անծանոթ մեկը մտնելով քաղաքի կենտրոնը, կարող էր հարցնել, թե որտե՞ղ է Վրաստանի նշանավոր մայրաքաղաքը: Սակայն անցնում է երկու տասնամյակ և պատկերը միանգամայն փոխվում է: 1816 թ. Վրաստանի զինվորական կորպուսի հրամանատար նշանակված ռեներալ-լեյտենանտ Ա. Երմոլովը, իբրև Կովկասի գերագույն կառավարիչ, մեծ բարեփոխություններ է կատարում թիֆլիսում թե՛ քաղաքաշինության, թե՛ մշակութային ասպարեզներում: Նրա նախաձեռնությամբ 1819-ին հիմնադրվում է «Փարթուլի գաղնթի» («Վրացական լրագիր») պարբերաթերթը (1819—1822): 1828-ին կառավարչապետ նշանակված Պասկևիչը պատերազմական իրադարձությունների լուսաբանման նպատակով հիմնադրում է «Тифлисские ведомости» օրական պաշտոնաթերթը (1828—1833):

1837 թ. Կովկասի կառավարչապետ Ն. Գոլովինը եվրոպական առաջնա-

1 Վ. Ս. Նալբանդյան, Թիֆլիսին հայ մատենագրության մեջ, Երևան, 1958:

կարգ քաղաքների ճարտարապետության ոճով հիմնականում վերակառուցում է Թիֆլիսը: Նրան հաջորդած՝ արդեն փոխարքա գեներալ Մ. Վորոնցովը 1845-ից հսկայական գործ է կատարում քաղաքի ներքին բարեկարգման ուղղությամբ: Բնակչության զվարճության և ժամանցի նախկին սահմանափակ միջոցների՝ մուշտեկովի, ջիրիդի փոխարեն ստեղծվում են հանգստի ժամանակակից օջախներ և վայելքի տեսակներ: Կովկասը ծանոթանում է թատերական կուլտուրային: Մշտապես կազմակերպվում են տարբեր վայրերից հրավիրված թատերախմբերի ներկայացումներ. Վորոնցովը Թիֆլիսում հիմնում է տեղական մշտական թատրոն, 1846 թվականին՝ «Хавказ» լրագիրը և հայերեն «Կովկաս» թերթը: Նրկրամասում սկսում է աշխուժանալ հասարակական կյանքը, արթնանում է ազգային ոգին, նոր թափ են առնում կրթական գործը, վերաշինության ու բարեկեցության ստեղծման եռանդը: Քաղաքի բնակչության թիվն այդ օրերին հասնում է 52000-ի: Հայ բանասեր և լրագրող Գեորգ Տեր-Ալեքսանդրյանցի հայրը՝ Դավիթ քահանա Ալեքսանդրյանցը ռեկտորադրութին Թիֆլիս քաղաքի հոգավածում վեր է հանել իր ժամանակի Թիֆլիսի ամբողջական պատկերը, առանձնակի ուշադրության արժանացրել դպրոցական գործը և մասնավորապես ընդգծել օրիորդաց դպրոցներ բացելու անհրաժեշտությունը²:

Թիֆլիսը Վրաստանի և Իմերեթի հայկական թեմի կենտրոնն էր, ուստի Թիֆլիսահայության առօրյան անպայմանորեն կապված էր առաջնորդարանի, թեմական առաջնորդի գործունեության, կաթողիկոսի այցելությունների ու հանդիպումների հետ: «Կովկասի» հրատարակության տարիների ազգային կյանքի ամենահիշարժան երևույթը, թերևս, երկարատև բացակայությունից հետո՝ Ներսես Աշտարակեցու վերադարձն էր հայրենիք: «Կովկասի» խմբագրությունը խանդավառ տողերով է նկարագրել Ներսես V-ի մուտքը Թիֆլիս և էջմիածին, սիրո ջերմ խոսքերով ներկայացրել նրա վաստակը թե՛ իբրև Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդի, և թե՛ իբրև ռուս-պարսկական պատերազմի օրերի հայ ազատագրական ջոկատների կազմակերպչի: Նվաճված, երբ նա վերադառնում էր քիչինչ կանաչող պաշտոնակատարությունից, բարձրանալու համայն հայության կաթողիկոսի աթոռը, խմբագրությունը հավուր պատշաճի պաթետիկ ոճով ընդգծում էր նրա ժողովրդականությունը. «առ այս ընտրութիւն այնքան միակամ գտաւ սիրտ ամենեցուն՝ մինչև մարթ է ասել, թէ և կամարք սրբոյ տաճարին էջմիածնի արձագանս տային անուան Ներսիսի, որ ՚ի շրթունս էր ամենայն ժողովրդեան»³:

1845 թ. դեկտեմբերի 17-ին Ներսեսը ժամանում է Վրաստան: Դուռնից նրան դիմավորում է հոգևորականության պատվիրակությունը՝ Վրաստանի թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի գլխավորությամբ: Դիմավորողների մեջ էին Կովկասի քաղաքական գործերի կառավարիչ, գեներալ-լեյտենանտ Լադինսկին և Հյուսիսային Դաղստանի գործերի հրամանատար գեներալ-լեյտենանտ Վ. Բեհրուդյանցը: Քաղաքի մուտքի մոտ, Վերայում, կաթողիկոսին դիմավորում են ղեկավար, կոմս Կ. Բեկենդորֆը և փոխարքայի որդին: Հաջորդ օրը կաթողիկոսին անձամբ այցելում է փոխարքա Մ. Վորոնցովը: Այդ օրը Վանքի մայր եկեղեցում կաթողիկոսը հանդիսավորապես ընդունում է ժողովրդին:

Հունվարի 1-ին կաթողիկոսին այցելում են տեղի հոգևոր դասի ներկայացուցիչները և Ներսիսյան դպրոցի սաները՝ իրենց վերատեսչի և ուսուցիչների հետ: Այստեղ աշակերտները կաթողիկոսի նոր տարին շնորհամորում են ուսաներեն մի ճառով և գրաբար բանաստեղծությամբ: Այնուհետև «Կովկասի» էջերում շարունակաբար տպագրվել են Թիֆլիսում և էջմիածնում կաթողիկոսի հանդիսավոր ընդունելության հետ կապված բոլոր նորությունները:

1846-ի աշնանը էջմիածնից գալով Թիֆլիս, Ներսես Աշտարակեցին ձեռնամուխ է լինում Խոջիվանքի անշուօ գերեզմանատան ընդարձակման գոր-

² Կովկաս, 1846, № 30, էջ 114:

³ Կովկաս, 1846, № 1, էջ 2:

ծին, նա փոխարքայից խնդրում և ստանում է խոշիվանքին հարող հողային տարածությունը և հանգանակություն կազմակերպելով, սկսում է պարսպապատել տալ⁴։ Դարձյալ Ն. Աշտարակեցու նախաձեռնությամբ և Վորոնցովի հավանությամբ 1847 թ. ապրիլի 15-ին Գարրիել Թամամյանի ծախքով հիմնադրվում է Թիֆլիսի առաջին հայկական թատրոնի շենքը։ Այդ առիթով կազմակերպվում է մի մեծաշուք խնջույք։ Հիմնարկեցին փոխարքայի որդին ղնում է առաջին քարը, իսկ մյուս բարձրաստիճան պաշտոնյաները հիմքի փորվածքի մեջ են նետում 1847 թ. հատված արծաթե դրամներ։ փորվածքը ծածկվում է պղնձե տախտակով, որի վրայի մակագրությունը հայտնում էր շենքի հիմնադրման տարեթիվը և բարեգործի անունը։

«Կովկասը» մի քանի հաղորդում է տպագրել շինարարության ընթացքի մասին և հպարտությամբ արձանագրել, որ թատրոնի շենքը պետք է դառնա հայ ազգի մեծագործության հիշատակի խորհրդանշը։ Նշվում էր նաև, որ իբրև բացառիկ երևույթ Թիֆլիսում (եւր Ասիա է 'ի Եւրոպացւոց, և Եւրոպա Ասիացւոց) թատրոնը կանգնեցվում էր որպես ասիացիների սիրո նշան եվրոպական քաղաքակրթության հանդեպ։ Շատ ափսոս, որ Թամամյանի թատրոնը, որի բացումը տեղի է ունենում 1851 թ., Թիֆլիսահայությանը ծառայում է մի կարճ միջոց միայն՝ այրվելով 1874 թ.։

Քաղաքական և փոքրիշատե նյութական ապահովություն ձեռք բերած Թիֆլիսը, սակայն, երաշխավորված չէր բնական աղետներից, որոնք մեծ հոգսեր էին պատճառում տեղի ժողովրդին։ Օրինակ՝ 1846—1847 թվականների խոլերայի համաճարակը և մորեխների փոթորկի ներխուժումը երկրամաս։ խոլերան շատ լայն սահմաններ էր ընդգրկում։ Այն տարածված էր Պարսկաստանում, Բաղդադում, Բաքվում, Շամախիում, Ստավրոպոլում, Նոր Նախիջևանում, Թիֆլիսում և այլուր։ 1847-ի աշնանը համաճարակը հաղթահարվում է Անդրկովկասում։ Շարժաթերթի մի շարք հոդվածներում խոսվում է Թիֆլիսում ձեռնարկված կանխարգելիչ միջոցների՝ հիվանդանոցների բացման, կենսամթերքների և հացի որակի բարելավման մասին։ Աղետի դեմ պայքարելու նպատակով էջմիածնից բերվում են նաև սուրբ մասունքներ և, ինչպես հավաստում է «Կովկասի» թղթակիցը, խոլերան աստիճանաբար անհետանում է։

Էլ ավելի տագնապալի էր մորեխների արշավանքը։ Ղրանք հայտնվել էին Շարուրի, Զանգիբասարի, Շուշվա նահանգներում, մեծ չափերով վխտում էին Թիֆլիսի շրջակայքում։ Թերթում բազմաթիվ հոգվածներ են տպագրվել այն մասին, թե ինչ անձնանվեր աշխատանք էին կատարում քաղաքի համաքարները, որոնք կոտորում և թաղում էին մորեխների կույտերը։ Հայտնվում է, օրինակ, որ մայիսի 15-ից 24-ը թաղվել է 6255 փութ մորեխ։ Քաղաքի Կուկիայի արվարձանում համքարները ոչնչացնում և թաղում են 3000 փութ մորեխ (100 միլիոն հատ (")) և որ առավել ստույգ է՝ հրաժարվում են վարձատրությունից⁵։ Թիֆլիսի բնակչության խնդրանքով ներսես Աշտարակեցին պատվավոր քաղաքացի Միհրան Միրիմանյանին հատուկ կոնդակով գործուղում է էջմիածին, որպեսզի նա Ակոուի գյուղի Հակոբ Մծբնա հայրապետի վանքի մոտակա աղբյուրից սուրբ ջուր բերի Թիֆլիս։ Ավանդության համա-

4 խոշիվանքի գերեզմանատան հողը պատկանում էր Բեհրուդյանների իշխանական տանը, որոնք իրենց այգում կառուցել էին հետազայում խոշիվանք անունը ստացած ու Աստվածածնի եկեղեցին։ Ներսես V-ը Բեհրուդյաններին համարում էր ազգը մխիթարողներից և ընդգծում նրանց նախնիների գերը և ունեցած մեծ համարումը Վրաստանի թագավորության մեջ։

5 Ի դեպ թերթում տպագրված հոդվածներից մեկում խոսվում է Թիֆլիսի համքարների համերաշխության, առաքինությունների, ընկերասիրության մասին։ Հուլիս են բարեգործական այն միջոցառումները, որոնք կազմակերպում էին համքարները՝ իրենց անաշխատունակ աղահետակիցներին նյութապես օգնելու, շունտը համքարներին և կամ օտար նեղեցյալներին թաղելու, նրանց ընտանիքներին օժանդակելու գործում (Կովկաս, 1846, № 30)։

ձայն այդ ջրի հետքերով պետք է սարյակների հարյուրավոր հրամաններ թռչեին-
գային և ոչնչացնեին մորեխներին: Ասվում էր, թե իբր նման հրաջք տեղի
էր ունեցել 1825 թ. գեներալ Նրմուլովի և նրա զորապետների աչքի առաջ:
Ինչևիցե, օրեր անց Սողանլուի կայարանում 2500 հայեր հանդիսավորա-
պես դիմավորում են Միրիմանյանին, նրա բերած սուրբ ջուրը բաժանում քա-
ղաքի եկեղեցիներին և ջերմեռանդորեն աղոթում:

Շուտով սուրբ ջրի հրաշագործության համբավը ոչ միայն տարածվում է
շրջակա բնակավայրերում, այլև հասնում է շատ ավելի հեռուն, մինչև Ռու-
սաստանի մայրաքաղաքը: «Սանկտ-Պետերբուրգսկի Վեդոմոստի» լրագրի էջե-
րում այդ մասին երկու հաղորդում է տպագրվում, որոնցից մեկում որոշա-
կիորեն գրված էր, թե այդ «աստուածառակք թռչունք կոտորեցին և իսպառ-
ջնեցին զմարախն և բարձին զապականարար վնասս նորա»: Թեև ոչ մեկը
չէր տեսել սարյակների և մորեխների միջև եղած ճակատամարտերից որևէ
մեկը, բայց «Կովկասի» թղթակիցը փորձում էր համոզել մարդկանց, թե բուն
գործողությունը պարտադիր չէ տեսնել, որովհետև «ո՛չ է մեզ պիտոյ աչոք
տեսանել զտարմ (երամբ), այլ հաւատալ, թէ՛ կարող է աստուած եթէ կա-
մեսցի, առնել զամենայն, և եթէ ո՛չ առնէ, վասն այն, զի չեմք արժանի
ողորմութեան նորա»⁶:

Շաբաթաթերթում խոսվում է նաև արյուն առնելու և այլ նախապաշարում-
ների մասին, որոնք նկատվում էին ժողովրդի կենցաղում և որոնք դատա-
պարտվում էին հողվածագիրների կողմից: Նախապաշարումները կային և
հեղտ չէր միանգամից ազատվել դրանցից, բայց զարգացման անկասելի օրին-
քով հայ հասարակական միտքը նույնպես առաջընթաց էր ապրում: Հայ
մտավորականներից շատերն արդեն առաջ էին քաշում եվրոպական լուսա-
վորության, քաղաքակրթության նվաճումների, բնական գիտությունների
բնագավառի ձեռքբերումների ընդօրինակման պահանջներ: «Կովկասի» էջե-
րում տպագրված բնագիտական որոշ հոդվածներ ապացուցում են, որ սնա-
հավատության ժամանակներն անցնում էին: Կովկասահայ առաջին թերթը
XIX դ. արևի խավարումների մասին մի հոդված է արտատպում ռուսական
մամուլից: Շատ արժեքավոր է լուսնի խավարմանը նվիրված տեղական մի
այլ հոդված, որը գրված է և՛ գիտական հիմնավորումներով, և՛ ժողովրդի
մտավոր մակարդակին մատչելի ոճով: Անստորագիր այս հոդվածը կառուց-
ված է հարց ու պատասխանի ձևով, որով երևան էին հանվում հասարակու-
թյան տարբեր շերտերի աշխարհայացքային առանձնահատկությունները: Հոդ-
վածագիրը պատմում է, որ 1847-ի սեպտեմբերի 12-ին Թիֆլիսում տեղի
ունեցած լուսնի խավարման կապակցությամբ մարդիկ փոխանակ հարցնելու,
թե այդ ի՞նչ երևույթ է, հարցնում են, թե այդ ի՞նչ է գուշակում: Եթե նրանց
բացատրեք, թե խավարման պատճառը երկրագնդի դիրքն է, որն ընկնում է
լուսնի և արեգակի միջև և ստվեր ձգելով լուսնի վրա՝ խափանում արեգակի
լույսի անցումը դեպի լուսին, նրանք չեն հավատա:

Շատերն ասում են, իսկ ո՞վ է այդ տեսել. մյուսն ասում է, մեր ոտքի
տակի եղածը հազիվ ենք ճանաչում, ուր մնաց մեզանից վերև եղածը: «Նը-
րորդն հոգուց հանեալ ՚ի խորոց սրտին՝ ասէ. վասն այդպիսի իրաց հա՛ն
բարկութիւն աստուծոյ ծանրանայ ՚ի վերայ մեր. եկն մարախ, եկն խոլերայ,
եկին զանազան անհաջողութիւնք. հասո՛ւ եղեն՝ միտք գիտնոց՝ այնոցիկ աս-
տուածառաք բարկութեանց, որք յերկրի, զիա՞րդ հասու լինիցին այնց՝ որ ՚ի
յամպս»: Հոդվածագիրը շարունակում է «խոսեցնել» իր հերոսներին: Երբ
նրանց հայտնում են, թե շուտով նաև արևի խավարում պետք է լինի, ամեն-
քը սասանվում են և հարցնում զարմանքով. «Մի՞թե ի միում ամսեան երկու
խաւարմունք երկուց լուսաւորաց պատահի՞ն»: Իսկ պատմողն ծիծաղելով
ասաց. «Նախանձավոր լուսինն, որ այսօր խաւարեցաւ ի ստուերէ երկրի, ՚ի
27 սեպտեմբերի անկեալ ՚ի մէջ արեգական և երկրի, զստուեր իւր արկցէ

⁶ Կովկաս, 1847, № 18, էջ 71:

լերկիր. և դուք տեսանիցեք զարեգակն որպէս թէ խաւարեալ. այլ նա ո՛չ խաւարի, խաւարի երկիր, զի ստուեր լուսնոյ մթացուցանէ զնա, և արգելու տեսանել զարեգակն ամբողջ՝ որպէս յայլ ժամանակս»⁷:

Եվ այսպես, ապրում էին կողք-կողքի հինն ու նորը, իրենցով բնութագրելով դեպի քաղաքակրթությունը քայլող երկրամասի անցման շրջանի հակասական պատկերը: Անկասկած, Թիֆլիսն ինչ-որ չափով դեռևս նախապաշարված էր, Թիֆլիսը ակնածանքով էր վերաբերվում աստվածային հրաշքին, բայց Թիֆլիսն արդեն ծանոթ էր լրագրությանը, թատրոն էր հաճախում, երիտասարդ սերունդը սովորում էր ներսիսյան դպրոցում, մասնավոր պանսիոններում և բանաստեղծություններ հորինում: Թիֆլիսը զոհեր էր տալիս խոլերային, բայց և տոկում էր, դիմադրում: Թիֆլիսի համքարներն անվարձահատույց իրենց քաղաքացիական պարտքն էին կատարում, բնաջնջում մորեխների հորդաները և սեփական փառքը մեծահոգաբար զիջում սարյակ-թուղուններին: Սակայն կենսախիղճ Թիֆլիսն ապրում էր նաև իր ավանդական տոներով ու ծեսերով, որոնք նա կարողանում էր ժողովրդական տոնախմբությունների վերածել և զվարճանալ ամբողջ հոգով:

Օր չի անցնում, գրում է Պատկանյանը, որ որևէ տեղ ուրախության հանդես չլինի: Թիֆլիսի զվարթամիտ բնակիչները իրենց սրտի խնդությունն ամենուր հայտնում են փողերի և թմբուկների աղմուկով: Բավական է մի քանի հոգի հավաքվեն տանը կամ դրսում և նրանք իսկույն դեպի իրենց են ձգում ուրախակիցների նորանոր խմբերի:

Ժողովրդական տոներից թերթերում խոսվում է աշնան բերքահավաքին հաջորդած կիրակնօրյա քեֆերի և զվարճությունների անվանդույթի մասին: Ավելի շատ էին կրոնական տոները, որոնք Թիֆլիսեցիք տոնում էին յուրովի. դրանք վերածելով աշխարհիկ ուրախ հանդեսների:

Հունվարի 14-ին վրացական ուղղափառ եկեղեցին կատարում էր Վրաստանի լուսավորիչ սուրբ Նունեին նվիրված տոնը: Այդ օրը Սիոնի եկեղեցում հանդիսավորապես բացվում էր այն տուփը, որում պահվում էր սրբուհու խաչը: Նա դրանով էր ժամանակին քարոզել «զբանն աստուծո՝ ի հինն ի վերայի»: «Սուրբ Նունի» հողվածում նկարագրվում է Վրաստանում քրիստոնեությունը տարածած սուրբ Նինոյի տոնը և պատմվում խաչին բաժին ընկած ողիսակալների պատմությունը⁸:

«Կովկաս» թերթում զետեղված են ուշագրավ հաշորդումներ՝ նվիրված զատկի տոնակատարությանը: Հողվածագիրը նկարագրում է ծիսական հանդեսին հաջորդած զբոսանքներն ու ձիարշավները, հայերի հոսքը դեպի Հավլաբար, որտեղ տոնավաճառ էր կազմակերպված:

Մեկ շաբաթ անց, ապրիլի 6-ին և 7-ին, կատարվում են «Կանաչ կիրակի» և «Ավետիք» կրոնական ծեսերի հետ կապված հանդիսությունները: Դրանք ոռոսաց եկեղեցու օրենքներով տեղի էին ունենում Ալեքսանդրյան հրապարակում, իսկ հայկական և վրացական օրենքներով՝ եկեղեցիներում: Կրոնական այս տոները նույնպես վերածվում էին ժողովրդական տոնախմբությունների: «Թիֆլիս, քաղաք քաջաց, ի զբօսանս իւր ընդ ուրախութեան լծորդէ և զգործ արիական հանդիսից: ՚ի «Կանաչ կիրակէի» լինի արշավահանդէս ձիւրն-թացից...»: Այդ օրը, գրում է Պատկանյանը, «Քանի՜ ազգք շրջին ՚ի զբօսանս անդ. հայք, ոռոսք, վիրք, պարսիկք, լէզկիք, չերքէզք, օսք, թիուլք, իմերէլք, և արք, և կանայք, և ծերք, և պառաւք, և երիտասարդք, և կուսանք, և պատանիք, և պատանեկուհիք, ոմանք հետի, ոմանք կառք, բազումք ևս երիւարոք, իւրաքանչիւր ըստ զարդու և ըստ տարազու իւրոց հայրենեաց, նազաբայլ ճմմելով վերամբառնան ՚ի լեռն Սուլակ կամ ՚ի Հաւլապար»⁹:

7 Կովկաս, 1847, № 37, էջ 145:

8 Կովկաս, 1846, № 4:

9 Կովկաս, 1847, № 15, էջ 57:

Ապրիլի 6-ին «Կանաչ կիրակիի» տոնակատարությունից հետո բազմության մի մասը Սուլուակից բարձրանում է Մթածմինդա լեռան սրբավայրը։ Հողվածագիրը նուրբ դիտողականությամբ ներկայացնում է հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներին։ Կրոնասերները գնում են համբուրելու սրբերի շարքը դասված Դավիթ Միայնակի շիրիմը, իմաստասերներն այցելում են Թիֆլիսի երեկիների գերեզմանները, իսկ «Ուսումնասերք երթան արտասուք պատուել զդամբարան երեկի բանաստեղծին կատակերթեան «Горе от ума» Գրիբոյեդովի, որոյ անուն հնչեսցի և յայնժամ, յորժամ լեռան այն ելցէ 'ի տեղւոջէ իւրմէ, և անկցի 'ի ծով»¹⁰։

Գրիբոյեդովի փառքի հավերժությունը հավաստող այս մեծապես հուզիչ գնահատականը մեր սերունդներին է հասցնում Թիֆլիսի հասարակության անանց սիրո իրողությունը Գրիբոյեդովի նկատմամբ։ Շատ հետաքրքրական է այս առիթով Գ. Պատկանյանի կատարած մի ընդհանրացումը։ Համաժողովրդական այս հանդիսությունները, գրում է նա, ամենայն ժամ հիշեցնում են այն ազատության մասին, ինչը վայելում են Կովկասի ժողովուրդները ուսական կայսրության տիրապետության տակ անցնելուց հետո։ Մերերը հիշում են, շարունակում է նա, որ ննջեցյալի դիակը Հավլաբար տանելու համար հարկ էր լինում զինել բազմաթիվ մարդկանց ու թշնամիների ահից ճեպով ընթանալ գերեզմանատուն և արագորեն վերադառնալ։ «Այժմ,— գրում է նա,— տկար կին՝ միայնակ ճեմէ և ո՛չ ուստեք ահ և ո՛չ ուրեք երկիւղ»¹¹։

Գաբրիել Պատկանյանը ոչ միայն նկարագրում էր զբոսանքներն ու հանդեսները, այլև ճանաչում էր գեղեցկությունը և հիանում նրանով։ Նա բառացիորեն սիրահարված էր Թիֆլիսին, նրա բնությանը, նրա մարդկանց։ Նրա համոզմունքով Թիֆլիսի շրջակա բնությունն այնքան գեղեցիկ էր, որ այնտեղ ապրել կտենչալին ամեն մի իշխան ու թագավոր։

«Արդե՞ք զաւառ կարէ տալ համանգամայն զայդչափ կատարելութիւն գեղոյ սեռի կանանց։ Միայն երախտապարգև բնութիւնն երջանիկ լեռնակողմանցն Թիֆլիսու կարէ զարդարել զօրիորդն շուշանափայլ գեղեցկութեամբ մարմնոյն, վարդափթիթ կարմրութեամբ այտիցն, հրացայտ ցլմամբ աչացն թխակն կուտից, որոց յարմարադիր իրանն նման նոճույ և կիպարի, 'ի շնորհաշուք շարժմունսն ձևակերպեալ է զիւրաքանչիւր գեղուղեղն յոմն աստուածունհի։ Վրաստան կարէ պանծալ 'ի գեղեցիկս իւր»¹²։

Գաբրիել Պատկանյանը հավաստում է, որ Թիֆլիսում հայերն ու վրացիներն ապրում են սիրով ու համերաշխությամբ։ «Սիրեցեք միմյանց» աստվածադիր պատվիրանը սրբության է կատարվում Թիֆլիսում։ «Հայք անխտիր երթան յեկեղեցիս և յուխտատեղիս մրաց և վիրք նույնօրինակ դիմեն ի տաճարս հայոց։ Հակառակութիւն և երկպառակութիւն՝ պատճառք խռովութեանց և թշնամանաց, չեն ինչ հաճելի աստուծոյ»¹³։

Վրաց ժողովրդի նկատմամբ Գ. Պատկանյանի ունեցած համակրանքի արտահայտությունը պետք է համարել նաև «Արարատ» շաբաթաթերթում տպագրված մի երգ-բանաստեղծություն, որը խմբագրին էր տրամադրել ոմն Իսահակ Տեր-Գրիգորյան։ Պատկանյանին ուղղած նամակում նա հայտնում էր, որ 1848 թ. պաշտոնական գործուղման բերումով գտնվելով Կախեթի շրջանի դյուզերից մեկում, նա այգիներում պատահաբար լսում է մի գեղանի վրացուհու երգի ձայնը։ Աղջիկը շոնգուրը ձեռքին «այգվո ճանապարհի մեջ ման գալով՝ հիանալի ածում էր, և ինքն ևս քաղցր ձայնով այս երգը ասում էր վրաց լեզվով»¹⁴։ Առաջին սիրո տվյալտանքներն արտահայտող այդ երգը

10 Նույն տեղում, էջ 56։

11 Նույն տեղում, էջ 57։

12 Նույն տեղում, էջ 58։

13 Նույն տեղում։

14 Արարատ, 1850, № 12, էջ 87—88։

տպագրվում է նամակագրի թարգմանությամբ («Ոչ ոք կարող չէ ասել, թե այսօր են անձնիշխան»)։ Հնարավոր է, որ սույն երգը պատկանում է ժամանակի վրացի բանաստեղծներից մեկի գրչին և երգվել է ժողովրդի մեջ։ Ցավոք, մենք ձեռնհաս չէինք պարզելու այս ենթադրությունը։

Թիֆլիսի հասարակության բարձրի համար շատ բնութագրական է 1850 թ. աշնանը թագաժառանգ Ալեքսանդրի այցելության հետ կապված անցուղարձի նկարագրությունը, որը զբաղեցրել է «Արարատ» շաբաթաթերթի 1850 թ. ամբողջ 10-րդ համարը։ Այդ երևույթն ինքնըստինքյան բացառիկ չէր կայսերական տան անդամների համար, բայց Թիֆլիսի պարագայում մեզ համար այլ իմաստ է ստանում։ Բանն այն է, որ Պատկանյանն իր ճարտար գրչով հանգամանորեն նկարագրել և սերունդներին է հասցրել բազմազգ այդ քաղաքի ուրախ ժողովրդի բուռն ոգևորության և կազմակերպած շքեղ տոնախմբությունների պատկերը։ Այդ համարը զարմանալի կենդանության և ներկայացնում է Թիֆլիսի ինքնատիպ առօրյան, տոնական օրերին քաղաքացիների համախմբվածության և համընդհանուր խանդավառության անկրկնելի մթնոլորտը, ինչպես և հայ հասարակության ունեցած անվերապահ կշիռը Վրաստանի մայրաքաղաքում։

Եվ այսպես, սեպտեմբերի 25-ին Թիֆլիսի բնակչությունը դուրս է գալիս քաղաքի սահմաններից և «Մոսկվայի գուռ» կոչվող ճանապարհով դիմում է դեպի Դուշեթ բնակավայրը, ուր տեղի պիտի ունենար դիմավորման արարողությունը։ Զինվորական շարասյուներին հետևում էին բոլոր նահանգներից ճրավիրած ազնվական և իշխանական տներին՝ գեղեցիկ հանդերձավորված պատանի ձիավորները, որոնք կազմում էին պատվավոր հյուրի անձնակազմի գունդը։ Այնուհետև քայլում էին համբարական միություններն իրենց դրոշակներով, ազգային նվագարաններով, թմբուկներով, փունջ-փունջ ծաղիկներով ու կանաչ ոստերով։ Ժամը 5-ին Մետեխի բերդի թնդանոթների որոտն ազդարարում է թագավորազնի գալուստը։ Թնդում են «կեցցե»-ները, հնչում են եկեղեցիների զանգերը, որոնք չեն լուռ մինչև խոր գիշեր։ Թիֆլիսի քաղաքագլուխ Զաքարիա Գուլասպյանցը և քաղաքային հասարակության պատվավոր անդամները աղ ու հաց են մատուցում հյուրին, որից հետո ձի հեծած Ալեքսանդրը դիմավորող բազմության ուղեկցությամբ մտնում է Թիֆլիս։ Թափորը կանգ է առնում Սիոնի տաճարում, ուր Ալեքսանդրին ընդառաջում և ողջունում են քաղաքի բարձրաստիճան հոգևորականները, զինվորական և քաղաքացիական աստիճանավորները, այնուհետև ժողովուրդը պատվավոր հյուրին ուղեկցում է մինչև Գուլուխնսկի պողոտայի սկզբում գտնվող փոխարքայի ապարանքը։

Սեպտեմբերի 26-ին, առավոտյան, փոխարքայի տան առջև կրկին խմբվում են հեծյալ զինվորականները, ազնվական ազատագույնը՝ իրենց տարազներով ու դրոշակներով, համբարները, քաղաքացիները։ Հնչում է երաժշտությունը։ Նախ քաղաքի մեծամեծերը, այնուհետև աստիճանավորներն ու քաղաքի հասարակության ներկայացուցիչները ներկայանում են թագաժառանգին։ Ընդունելությունից հետո Ալեքսանդրն այցելում է Զինարանը, Ազնվականների ճամարանը, զորանոցը, Պատկանյանի կողմից «Մեծ թատրոն» անվանված՝ Գ. Թամամշյանի թատրոնը (որի կառուցումն ավարտվում էր արդեն)։ Երեկոյան ընդունելություն է կազմակերպվում փոխարքայի տանը, ուր հրավիրված էին զինվորական և քաղաքացիական երեւելի աստիճանավորներ՝ իրենց տիկնանց հետ։ Պատկանյանը համապատասխան հերթականությամբ հիշատակում է կենացներն ու արտասանված ճառերի բովանդակությունը։

Սեպտեմբերի 27-ին արքայազնը շարունակում է ծանոթանալ քաղաքի տեսարժան վայրերին, այցելում է նավթուղի զորանոցն ու զինվորական հիվանդանոցը։ Երեկոյան նա հրավիրվում է քաղաքի ազնվականների խնջույքին, որը կազմակերպված էր Տեր-Շամադյանի պարտեզում։ Հյուրին ընդառաջ է գնում իշխան Օրբելյանին՝ մի քանի նշանավոր իշխանների ուղեկցու-

թյամբ: Պարտեզի դռնից մինչև հովանոցը Ալեքսանդրը քայլում է ոսկեթեփուկների վրայով: Ճեմելիքի երկու կողմերից դալարազարդ կամար էր կապված՝ զարդարված խաղողի ողկույզներով ու բլուրավոր ճրագներով: «Հովանոցն լուսավորված էր ճրագալույց ճարտարությամբ, զմբեթն, սենյակներն և ընդարձակ դահլիճն՝ հվրոպական նրբությամբ և ասիական ճոխությամբ հրաշակերտյալ: Հրավիրվածների ժամագույն բազմությունն էին հայազգիք: Քուռ գետի մյուս ափին հրավառություն էր, լույսի ճառագայթները ողողում էին շրջակայքը, աղմուկն ու աղաղակը լցնում քաղաքը: Այստեղ թագաժառանգն ականատես է լինում արևելյան հեթաթալին մի խրախճանքի, որն ավարտվում է հվրոպական պարերով, իսկ վերջում՝ լեզգիներով:

Ընթերթին՝ «աղնվականքն յուրյանց հին սովորությամբ խալիչանների վրա ծալապատիկ նստեցան, ավելի 200 հոգի: Զանազան տեսակ դինի ըմպելու ահագին մեծությամբ գործիքները սկսան շրջազալել, հազարփեշա, կուլա՝ և գոմեշի հղջուրներ և այլ զանազան ձևով բաժակները զարմանալի էին գործում տեսարանը»¹⁵:

Սեպտեմբերի 28-ին զորահանդեսը դիտելուց հետո արքայազնը հրավիրվում է Թիֆլիսի քաղաքային հասարակության հանդիսավոր ընդունելությանը, որը կազմակերպված էր Երեմիա Արծրունու քարվանսարայում: «Այս գիշերվա պայծառությունն ավելի գեղեցիկ և մեծավայելուչ էր, քան զամենայն ժամանակս», արձանադրում է «Արարատը»: Պատվավոր հյուրին ընդունում է հասարակության կողմից ընտրված հանձնախումբը՝ Զաքարիա Գուլասյանցի զլխավորությամբ: Ալեքսանդրը ոսկեթեփուկների վրայով քայլում է մինչև զմբեթազարդ դահլիճը, որի առաստաղն ու որմերը նախշված էին պարսկական դրվագներով, ծաղկանկարներով ու հայելներով: Այստեղից հյուրին կարճ ժամանակով ուղեկցում են շքեղորեն զարդարված բազալիսանան, որտեղից էլ՝ իշխան Բեհբուդյանի քարվանսարան, «որ նույնպես զարդարված էր պարսկային ձևով՝ ասիական կերպասներով և կեղծունեման շատրվան էր բխում կարմիր գինով... Շատրվանի շրջապատն կանգնեցուցած էին սիրամարգերն՝ օսմանցվող շալերից շինած: Այստեղ հայոց հասարակության առաջավոր անձինք լցրին հազարփեշա ասացյալ բաժակն շամպանյան դինեալ՝ և բարձրաբարբառ գոչեցին վասն առողջության և կենաց ժառանգավոր կայսերորդույն: ...Նորին վեհափառությունն առավ ձեռքերեն այն հազարփեշայն, և փոխարեն նոցա ըմպելոյն, ինքն ևս փոքր ինչ ճաշակեաց ի պատիվ քաղաքացեաց»¹⁶:

Հյուրին կրկին ուղեկցում են Արծրունու քարվանսարան: Ճաշից հետո նա դուրս է գալիս պատշգամբն երևեցավ մեկ զարմանալի տեսարան, որչափ կտաներ Թիֆլիսու դրությունն: Բոլոր հանդիպահայաց Հավլսբարի լեռնն ակռաբեկ էր եղած հրեղեն գծերով, ձախակողմն կվառեր բարձր հրեղեն դիտանոց: Աջակողմն՝ Զուբալովի քարվանսարայի զմբեթն ցույց կուտայր հրեղեն կիսագունդ, իսկ Շադինովի քարվանսարայի տափարակ կտուրի վերա բարձրացել էր հրեղեն լեռն՝ բոցեղեն սյուներով, շրջապատյալ ծիրանի ծխո ամպերով»¹⁷: Կրակն օձերի նման դեպի երկինք էին սլանում հրթիռները, և աստղերի պես փայլելով՝ ցրվում անհետանում:

Սքանչելի տեսարան էր բացվում նաև դեպի Քուռ գետը: «Լուսավոր լաստափայտքն, մարդկամբ լի՝ սկսան այն գետոյ վերայ շողիլ, և լաստափայտից մէջն մարդիկ կխաղային լեկզկալար, ազգային նուագարանաց հնչմամբ և նախնի թագավորաց հղջերսփողոց ձայնիւ: Ժողովրդյան հրճվանաց աղաղակն լցոյց զօդն»¹⁸:

15 Նույն տեղում, էջ 150:

16 Նույն տեղում, էջ 152:

17 Նույն տեղում, էջ 153—154:

18 Նույն տեղում:

Արքայորդին զրուցում է հյուրընկալներ Ս. Աբխալովյանի, Հ. Միրիմանյանի, Կ. Շադինյանի և այլոց հետ և Աբխալովյանին հանձնարարում՝ իր գոհունակությունը հաղորդել հասարակությանը:

Սեպտեմբերի 29-ին Ալեքսանդրը հրաժեշտ է տալիս Թիֆլիսին: Հանդիսությունները շարունակվում են: Պատկանյանը հանգամանորեն նկարագրում է սեպտեմբերի 30-ին ուսաց եկեղեցու՝ ս. Աստվածածնի հովանավորության տոնի առթիվ հայոց վանքի մայր եկեղեցում կատարված պատարագը: Գ. Պատկանյանն այստեղ մի հորդորական ճառ է արտասանում, որին հաջորդում է ծնրադիր աղոթքը: Այնուհետև եկեղեցու սրահում աղքատների համար կազմակերպվում է ճոխ ճաշկերույթ, որին օրվա ընթացքում մասնակցում է 2000 հոգի: Այդ հրավերքին, նշում է հոգվածագիրը, «իշխանքն սպասավորում էին և աղքատքն որպես հյուր՝ մեծարվում էին»:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Պատկանյանի ճառը, որն ամբողջովին տոգորված էր արևելահայության երախտագիտական զգացումներով՝ առ ցարական կառավարությունը: Պատկանյանը բախտորոշ իրադարձություն է համարում Վրաստանի միացումը Ռուսաստանին, որի շնորհիվ Թիֆլիսն ապահովվում է արտաքին հարձակումներից, իսկ քրիստոնյա ժողովուրդներն անխափան դավանում են իրենց հավատը: Իր մեկ այլ հոգվածում, որը կրում է «Բարեբախտություն այժմյան հայոց ազգի ընդ հովանյալ ուսաց տերության» խորագիրը, Պատկանյանը քննության է առնում արևելահայության քաղաքական, սոցիալական և բարոյական վիճակը՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո: Հետևությունը մեկն է. հայոց ազգի ոսկե դարն անցնելուց հետո նրա բարեբախտությունը վերականգնվել է Ռուսաստանի հետ միավորվելով միայն: Այդ օրվանից, գրում է Պատկանյանը, հայերն անդորր կյանք են ստացել, սկսել են զբաղվել առևտրով, նրանցից շատերը հարստացել են, իսկ հարստության և հանգստության պտուղը լուսավորությունն է¹⁹:

«Կովկաս» և «Արարատ» թերթերի հրատարակությունից անցել է շուրջ մեկ և կես դար: Փոխվել են ժամանակները, փոխվել են մարդիկ, հայ մշակույթը և լրագրությունը հասել են անօրինակ բարձունքների, և, սակայն, մեր սերունդը միշտ երախտապարտ կմնա անցյալ դարի 50-ական թթ. կովկասահայ լրագրողներին, որոնց թերթերի էջերում տեսնում է այդ օրերի Թիֆլիսը, հայ ու վրացի ժողովուրդների ժողովրդագրական առարկայի մնայուն պատկերները:

ТИФЛИССКАЯ МОЗАИКА

М. А. МХИТАРЯН

Р е з ю м е

В своих трудах армянские историки описывали жизнь «великого града Тифлиса», страдания и героическую борьбу его жителей против иноземных завоевателей. Однако будучи озабоченными политическими катаклизмами, они почти не обращались к повседневной жизни города. К счастью, на страницах издававшихся в Тифлисе в середине прошлого века еженедельников «Кавказ» (1846—47) и «Арабат» (1850—51) нашли отражение картины быта, нравов, верований и обрядов, а также взаимоотношений грузинского и армянского населения города. Эти материалы представляют Тифлис таким, каким он был в тот период истории.

¹⁹ Արարատ, 1851, № 19,